ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ. Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Շուկայական տնտեսության ձևավորման պայմաններում սոցիալական բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման ծանրության կենտրոնը, որպես կանոն, առավել հաճախ տեղափոխվում է խոշոր քաղաքների և առանձին տարածաշրջանների մակարդակ, որոնցում կենտրոնացված է բնակչության կենսագործունեության ապահովմանն ուղղված գործառույթների զգալի մասը:

Ընդհանուր առմամբ տարածաշրջանային ենթակառուցվածքների զարգացման և գործունեության առանձնահատկությունները պահանջում են ենթակառուցվածքային համալիրի բաղկացուցիչների կառավարման խնդիրների լուծման գիտականորեն հիմնավորված և տարբերակված մոտեցումների կիրառում: Ներկայումս ավելի մեծ բարդություն և, միաժամանակ, գիտական ուսումնասիրության ու գործնական կենսագործման ցածր աստիճան ունեն խոշոր արդյունաբերական քաղաքների արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների կառավարման և գործունեության հիմնախնդիրները: Տնտեսական հարաբերությունների վերափոխման արդյունքում ակնհայտորեն որոշակիորեն փոխվել է նման ենթակառուցվածքների տեղը վերարտադրության գործընթացում, և զգալիորեն մեծացել է դրանց ընդհանուր տնտեսական նշանակությունը: Ակնհայտորեն զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է քաղաքային տնտեսության բնականոն գործունեության ապահովումը, ինչը, ի դեպ, պայմանավորված է ենթակառուցվածքային համալիրի արդյունավետ կենսագործունեությամբ: Տնտեսական ենթակառուցվածքները առավել մեծ դեր ունեն սոցիալ-տնտեսական ընթացիկ և հեռանկարային խնդիրների լուծման գործում, որոշակիորեն պայմանավորում են բնակչության կյանքի որակը և ստեղծում քաղաքի տնտեսական ներուժի ընդլայնման արդյունավետ հիմքեր: Այս տեսանկյունից քաղաքային ենթակառուցվածքների կառավարման մեխանիզմների կատարելագործման հարցերի համակողմանի ուսումնասիրությունը տարածքային քաղաքականության խնդիրների արդյունավետ լուծման անհրաժեշտ նախապայմանն է:

Հարկ է նշել, որ զարգացման ներկա փուլում ռեգիոնալ տնտեսության մեջ առավել նշանակալի դեր ունեն խոշոր քաղաքները, քանի որ հենց դրանցում են հիմնականում կենտրոնացված ֆինանսական և տարածքային շուկաները: Բացի նշվածից, այդ բնակավայրերում է տեղաբաշխված տարածաշրջանի բնակչության, արտադրողական ուժերի, ինչպես նաև գիտական և մշակութային կենտրոնների զգալի մասը:

Տնտեսական վերափոխումների գործընթացում ձևավորված հիմնական միտումների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել քաղաքի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, որոնք պայմանավորված են արտաքին և ներքին գործոններով: Տնտեսության զարգացման ներկա փուլում քաղաքային բնակավայրերի կայուն զարգացման ապահովման կարևոր գործոն է զարգացած ենթակառուցվածքների առկայությունը:

Ընդհանուր առմամբ տնտեսագիտական գրականության մեջ «քաղաքային ենթակառուցվածքներ» հասկացության միասնական սահմանում գոյություն չունի: Որպես կանոն, քաղաքային ենթակառուցվածքները նախատեսված են տարբեր ոլորտներում որոշակի գործառույթների իրականացումն ապահովելու համար, այսինքն՝ կրում են միջոլորտային բնույթ և կատարում են ինտեգրացիոն գործառույթ: Բացի նշվածից, քաղաքային ենթակառուցվածքները

չեն ստեղծում նյութական բարիքներ, այլ պետական ֆինանսավորման միջոցով իրականացնում են որոշակի խնդիրների լուծումն ապահովող գործառույթներ:

Պետք է նշել, որ ենթակառուցվածքների ավանդական տարանջատումը արտադրական և սոցիալական բաղկացուցիչների ավելի շատ կրում է պայմանական բնույթ, քանի որ որոշ դեպքերում հնարավոր չէ միմյանցից տարանջատել քաղաքային ենթակառուցվածքների կողմից արտադրության ոլորտին և բնակչությանը մատուցվող ծառայությունները: Կառավարման կենտրոնացված համակարգի պայմաններում քաղաքային ենթակառուցվածքների ճյուղային դասակարգումը ներկա փուլում գործնականում կորցնում է իր կենսունակությունը, քանի որ հիմնված է պետական միջոցների հաշվին քաղաքային տնտեսության կառավարման և զարգացման պլանավորման վրա: Բացի այդ, տնտեսական հարաբերությունների ազատականացման փուլում տեղի է ունենում ծառայությունների ոլորտի առևտրայնացման գործընթաց, փոխվում են արտադրության և ծառայությունների ոլորտների ձեռնարկությունների միջև տնտեսական հարաբերությունները, ակտիվորեն զարգանում են շուկայական և կառավարչական ենթակառուցվածքները: Հայտնի է, որ ենթակառուցվածքները երկրի, տարածաշրջանի ու քաղաքի զարգացման հիմքը և արդյունքն են, ինչի պատճառով տնտեսական մի ֆորմացիայից մյուսին անցումը ենթադրում է քաղաքային ենթակառուցվածքների բաղկացուցիչների և տարրերի համապատասխան փոփոխություն:

Շուկայական հարաբերությունների պայմաններում քաղաքային ենթակառուցվածքների կազմում, արտադրական և սոցիալական բաղկացուցիչներին զուգահեռ, ձևավորվում է նոր՝ տնտեսական բաղկացուցիչը, չնայած այն հանգամանքին, որ իրենց վրա խիստ որոշակի ծանրաբեռնվածություն կրում են ենթակառուցվածքային համալիրի ինչպես արտադրական, այնպես էլ սոցիալական բաղկացուցիչները: Տնտեսական ենթակառուցվածքները այն ճյուղերի և ձեռնարկությունների համալիրն են, որոնք սպասարկում են ինչպես արտադրությանը, այնպես էլ ապահովում են քաղաքային բնակչության կենսագործունեությունը: Տնտեսական ենթակառուցվածքների գործունեության արդյունք է այն ծառայությունների գործունեությունը, որոնք անմիջականորեն (էլեկտրո, ջերմա, ջրա և գազամատակարարման ծառայություններ) կամ միջնորդավորված (տրանսպորտի, կապի, առևտրի ծառայություններ) նյութականացվում են իրենց ներգործության առարկաներում: Դրանք, որպես կանոն, ունեն միջճյուղային բնույթ և ուղղված են քաղաքային տնտեսության սպասարկմանը կամ բնակչության կենսագործունեության ապահովմանը:

«Տնտեսական ենթակառուցվածքներ» հասկացության գլխավոր բնութագրիչն է արտադրության զարգացման և քաղաքային բնակչությանը ծառայությունների մատուցման համար ընդհանուր պայմանների ապահովման գործառույթը: Տնտեսական ենթակառուցվածքները կարելի է ներկայացնել հետևյալ գծանկարի տեսքով.



Տնտեսական ենթակառուցվածքների գործունեության կազմակերպման համաշխարհային փորձի վերլուծությունը վկայում է դրանց որոշակի առանձնահատկությունների մասին: Առաջին,

մի շարք երկրներում տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է այդ ոլորտում գործունեության կազմակերպման և կառավարման գործընթացին պետության ուղղակի մասնակցությունից հրաժարմամբ: Երկրորդ, պետության ուղղակի մասնակցության նվազեցումը փոխհատուցվում է պետական կարգավորման անուղղակի մեթոդների ուժեղացմամբ և տվյալ ոլորտում իրականացվող գործունեության նկատմամբ վերահսկողական մեխանիզմների ընդլայնմամբ: Եվ վերջապես, շատ երկրներում ծառայությունների շուկայի ազատականացումն ուղղակիորեն նպաստում է մրցակցության ուժեղացմանը:

Ընդհանուր առմամբ, միջազգային փորձի ընդհանրացումը ցույց է տալիս, որ տնտեսական ենթակառուցվածքների զարգացման ներկա փուլի հիմնական միտումն է դրանց գործունեության առևտրայնացումը՝ պետական կարգավորման անուղղակի մեթոդների միաժամանակյա կիրառմամբ: Քաղաքի տնտեսական ենթակառուցվածքների կառավարումն ու գործունեության կազմակերպումն ուղեկցվում են բազմաբնույթ հիմնախնդիրների լուծման և կառավարչական որոշումների ընդունման անհրաժեշտությամբ: Հարկ է նշել, որ գոյություն ունեցող հիմնախնդիրների զգալի մասը կրում է համալիր բնույթ, ինչը նպատակահարմար է դարձնում այնպիսի չափորոշիչների մշակումը և կիրառումը, որոնք ընդունակ են լիարժեքորեն արտացոլել քաղաքի տնտեսական ենթակառուցվածքների իրական բովանդակությունը և հիմնական նպատակը: Ըստ էության, այդ չափորոշիչները կարող են ներկայացվել հետևյալ խմբերի տեսքով.

- տնտեսական չափորոշիչներ. քաղաքային տնտեսության ենթակառուցվածքային ապահովվածության հիմնախնդիրների շուկայական ասպեկտները բնութագրող քանակական և որակական ցուցանիշների համակարգ է,
- քաղաքի տնտեսական անվտանգության չափորոշիչներ. պարունակում են սահմանված նորմատիվներ՝ տնտեսական անվտանգության ցուցանիշներ, որոնց ապահովմանն է ուղղված քաղաքի տնտեսական ենթակառուցվածքների գործունեությունը,
- սոցիալ-տնտեսական չափորոշիչներ. ներառում են տեխնիկատնտեսական և սոցիալական նորմատիվներ, որոնցով սահմանվում են տնտեսական ենթակառուցվածքների նկատմամբ պահանջները:

Ըստ էության, քաղաքային տնտեսության արդյունավետ գործունեության ապահովման համար կարևորվում է քաղաքի տնտեսական ենթակառուցվածքների ներուժի գնահատումը: Վերջինս գոյություն ունեցող ռեսուրսներն օգտագործելու ընդունակությունն ու հնարավորությունն է՝ արդյունաբերության, սոցիալական ոլորտի և բնակչության պահանջմունքները բավարարելու նպատակով:

Իր օբյեկտիվ բովանդակությամբ ենթակառուցվածքային ներուժը բնութագրվում է համակարգի ռեալ իրավիճակով և արտահայտվում է դրա տարրերի քանակական և որակական չափորոշիչներով: Այդ տարրերից կարելի է առանձնացնել հետևյալները.

- նյութատեխնիկական ներուժ,
- ֆինանսական ներուժ,
- կազմակերպական-կառավարչական ներուժ:

Փաստորեն, վերջիններս այն անհրաժեշտ բաղադրիչներն են, որոնց առկայությամբ է պայմանավորված քաղաքի տնտեսական ենթակառուցվածքների արդյունավետ գործունեությունը: Ըստ էության, դրանք միաժամանակ քաղաքային տնտեսության բնականոն գործունեության ապահովման և զարգացման կարևոր նախադրյալներն են: Քաղաքի տնտեսական ենթակառուցվածքի կառավարման առանձնահատկությունների վերլուծությունը վկայում է այն մասին, որ չափազանց կարևոր և հրատապ լուծում պահանջող խնդիր է տարբեր մակարդակների կառավարման մարմինների միջև լիազորությունների հստակ բաշխումը: Այս առումով անհրաժեշտ է մշակել և ներդնել տնտեսական ենթակառուցվածքի կառավարման այնպիսի

համակարգ, որը, մի կողմից հաշվի կառնի դրա առանձին ճյուղերի գործունեության առանձնահատկությունները, իսկ մյուս կողմից կնպաստի շուկայական տնտեսավարման սկզբունքների արդյունավետ կիրառմանը:

Այսպիսով, կարելի է պնդել, որ քաղաքային տնտեսության զարգացումն ուղղակիորեն պայմանավորված է համապատասխան ենթակառուցվածքների առկայությամբ և արդյունավետ գործունեությամբ, ինչի ապահովմանն էլ պետք է ուղղված լինի քաղաքային իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականությունը:

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Մ.Քոչարյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ

ՔԱՂԱՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Պետության տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից է տարածքային քաղաքականությունը, որն, ըստ էության, պետության կողմից նրա վարչատարածքային միավորներում սոցիալ-տնտեսական հարաբերությունների կարգավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների, գործողությունների ու քայլերի, ինչպես նաև դրված նպատակներին հասնելու սկզբունքների, լծակների ու մեթոդների համալիր է: Այս համատեքստում խիստ կարևորվում են առանձին վարչատարածքային միավորների արդյունավետ զարգացման խնդիրները, որոնց լուծումն ակնհայտորեն կապահովի էական առաջընթաց երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար՝ ստեղծելով համապատասխան նախադրյալներ:

Տվյալ բնագավառի զարգացման քաղաքականությամբ նախատեսված միջոցառումների կատարման անհետևողականությունը, տարածքային զարգացման ռազմավարության, ինչպես նաև հիմնավոր սկզբունքների և մոտեցումների բացակայությունը հանգեցրին հանրապետության տարածքային զարգացման խիստ բևեռացմանը և սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացմանը: Այս հանգամանքն ուղղակիորեն ու մեծապես նպաստեց հանրապետության տարածքում բնակչության կենսամակարդակի կտրուկ անկմանը և առկա ռեսուրսների ոչ ռացիոնալ օգտագործմանը: Դա, իր հերթին, պայմանավորված էր նաև նրանով, որ տնտեսական նոր հարաբերություններին անցման ամբողջ ժամանակահատվածում իրականացվող բարեփոխումների հիմքում չդրվեցին հիմնավոր ու համալիր լուծումներ ենթադրող մոտեցումներ:

Տնտեսական զարգացման ներկա փուլում խիստ կարևորվում է առանձին տարածաշրջանների զարգացմանն ուղղված համալիր և ամբողջական ծրագրի մշակումը, որով կսահմանվեն այդ ուղղությամբ քաղաքականության հիմնական ուղղությունները, դրանցով պայմանավորված գերակայությունները, ինչպես նաև նախատեսվող միջոցառումները և դրանց իրականացման ժամանակացույցը:

Հանրապետությունում տարածքային զարգացման տեսանկյունից հատկապես կարևորվում է քաղաքների զարգացումը, որոնցում է տեղաբաշխված մարդկային, արտադրական և կառավարչական ռեսուրսների զգալի մասը: Նման հանգամանքը ակնհայտորեն բարձրացնում է քաղաքի գլխավոր հատակագծի մշակման և հաստատման կարևորությունը, որը քաղաքաշինական զարգացման պլանավորման հիմնական փաստաթուղթն է: Վերջինիս հիմնական նպատակներն են՝ քաղաքի կայուն զարգացման և կենսագործունեության բարենպաստ միջա-